

Յօհաննէս՝ զորդի մարդոյ շրջիլ ի մէջ եօթն ճրագարանաց: Այլ ի մէջ այսց խորհրդածութեանց օգտակարագոյնն բեկման մերոյ՝ է սրբազանն Խոստովանութիւն, որով մարդ ճանաչէ ի ձեռն նորին իբր ի հայելւոջ զպակասութիւնս իւր: Զի զոր օրինակ, անարատութեանց ցանկացողաց՝ է յատկութիւն, որ դէմ յանդիման եղեալ զհայելիս՝ զտղեղութիւնս իւրեանց գեղեցկացուցանեն, այսպէս մարդկայինս կեան՝ տղեղացեալ ի ձեռն մեզաց՝ ցանկայ յաւէտ անարատութեան, զի փեսային իւրոյ Յիսուսի հաճելի երեւեցի:

Եւ զի ցանգ մտաբերեալ իմ թէ որովհետեւ եւ զինուորեալն եկեղեցւոյ, որ կարգեալս եմ փեսայ, որով բաւեցից զհարսն նորին շքեղազարդել եւ իբրեւ զկոյս մի սուրբ՝ յանդիման կացուցանել Քրիստոսի՝ սրբազան խոստովանութեամբ, զի մի ունիցի զարատ ինչ եւ զտղեղութիւն, այլ շքեղազարդեալ երեւեցի խոստովանութեամբ եւ մեծվայելութեամբ: Ասան որոյ եւ զիս՝ զի մի կշտամբեսցէ հեծութիւն անցելոցն յիշատակաց, որպէս ասէ Սողոմոն՝ ներ Խմաստութեան, ջան եզի ըստ կարի զայս դուզնաքեայս յիշատակ սփռել յեկեղեցիս մերագնէից, որ գոլով կամար լանջագեղ հարսին եկեղեցւոյ, գօտելապէս զմէջնս պարապնդեսցէ, հետեւիլ արագաթռիչ ընթացիւք ընդ շաւիղս ընթացից դարշապարացն Յիսուսի:

Աստանօր ջանակուռն տրփանօք՝ ետու իլոյս ածել զլուսատուս այս պայծառափայլ եւ մթափարատ զանաղօտ եւ զանստուեր ճառագայթ, որ գրեթէ միանգամ եւեթ մտադրաբար ծառքողաց զզանազան համս ճաշակաց ընձեռէ ակործափորձ կոկորդին. զի որպէս արփին միակ գոլով զգունագոյն երանդս յօրինէ ի թերթս վարդից եւ այլոց ծաղկանց, եւ ըստ զանազան նոցին խառնուածոց՝ այլապէս զանուշագոյնն ընծայէ բուրումն հոտոց,